ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-9/26-1

ք. Երևան «10» հուլիսի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ **Մ. Ղամբարյանի,** ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Բ. Թադևոսյանի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ստանալ ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***4,564,000 (չորս միլիոն հինգ հարյուր վաթսունչորս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:*** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից

հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2018թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պարանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	**«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ**
ք. Երևան Բագրևանդի 5	**Ք. Երևան, Արզումանյան 32-10**
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան » ՓԲԸ**
Հ/Հ 900011144129	**Հ/Հ 002182558001**
ՀՎՀՀ 02522157	**ՀՎՀՀ 01210095**
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	**տնօրեն**
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	**Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-9/26-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Ապրանքի անվանում	Տեխնիկական հատկանիշներ	ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԸ	ԱՐՏԱԴՐՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐԸ
1.	Գլյուկոզա 800 թեսթ	Հավաքածուն պարունակում է 800 հատ քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով տուփ, նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	GLUC HK Gen.3, 800Tests, cobas c, Int.	Roche Diagnostics	Գերմանիա
2.	Ընդհանուր սպիտակուց 300թեսթ	Հավաքածուն պարունակում է 300 հատ քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	TP Gen.2, 300Tests, cobas c, Integra	Roche Diagnostics	Գերմանիա
3.	Ալբումին 300 թեսթ	Հավաքածուն պարունակում է 300 հատ քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	ALB BCG Gen.2, 300Tests, cobas c, Int.	Roche Diagnostics	Գերմանիա
4.	Բիլիռուբին ընդհանուր 250 թեսթ	Հավաքածուն պարունակում է 250 հատ քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	BIL-T Gen.3, 250Tests cobas c,Integra	Roche Diagnostics	Գերմանիա
5.	Բիլիռուբին ուղղակի 350 թեսթ	Հավաքածուն պարունակում է 350 հատ քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	BIL-D Gen.2, 350Tests cobas c, Integra	Roche Diagnostics	Գերմանիա
6.	Միզանյութ 500 թեսթ	Հավաքածուն պարունակում է 500 հատ քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	UREAL, 500Tests, cobas c, Integra	Roche Diagnostics	Գերմանիա
7.	Միզաթթու 400 թեսթ	Հավաքածուն պարունակում է 400 հատ քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	UA Gen.2, 400Tests, cobas c, Integra	Roche Diagnostics	Գերմանիա
8.	Կրեատինին 700 թեսթ	Հավաքածուն պարունակում է 700 հատ քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	CREAJ Gen.2, 700Test, cobas c, Integra	Roche Diagnostics	Գերմանիա
9.	Տրանսամինազա ԱՍՏ 500 թեսթ	Հավաքածուն պարունակում է 500 հատ քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	ASTL, 500Tests, cobas c, Integra	Roche Diagnostics	Գերմանիա
10.	Տրանսամինազա ԱԼՏ 500 թեսթ	Հավաքածուն պարունակում է 500 հատ քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	ALTL, 500Tests, cobas c, Integra	Roche Diagnostics	Գերմանիա
11.	Գամմա-գլյուամիլ տրանսպեպտիդազա S 400 թեսթ	Հավաքածուն պարունակում է 400 հատ քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	GGT Gen.2, 400Tests, cobas c, Integra	Roche Diagnostics	Գերմանիա
12.	Ալֆա-Ամիլազա 300 թեսթ	Հավաքածուն պարունակում է 300 հատ քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	AMYL Gen.2, 300Tests, cobas c, Integra	Roche Diagnostics	Գերմանիա
13.	Լիպազա 200 թեսթ	Հավաքածուն պարունակում է 200 հատ քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	LIPC, 200Tests, cobas c, Integra	Roche Diagnostics	Գերմանիա
14.	Հիմնային ֆոսֆատազա 200 թեսթ	Հավաքածուն պարունակում է 200 հատ քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	ALP IFCC Gen.2 S, 200T, cobas c, Int.	Roche Diagnostics	Գերմանիա

15.	Լակտատ-դեհիդրոգենազա 300 թեսթ	Հավաքածուն պարունակում է 300 հատ քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	LDHI Gen.2 acc.IFCC, 300T, cobas c, Int.	Roche Diagnostics	Գերմանիա
16.	Կրեատին ֆոսֆոկինազա CK-NAK 200 թեսթ	Հավաքածուն պարունակում է 200 հատ քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	CK 200 Tests, cobas c/Integra	Roche Diagnostics	Գերմանիա
17.	Խոլեսթերոլ 400 թեսթ	Հավաքածուն պարունակում է 400 հատ քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	CHOL HiCo Gen.2, 400Tests, cobas c, Int.	Roche Diagnostics	Գերմանիա
18.	Տրիգլիցերիդներ 250 թեսթ	Հավաքածուն պարունակում է 250 հատ քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	TRIGL, 250Tests, cobas c, Integra	Roche Diagnostics	Գերմանիա
19.	HDL - Լիպոպրոտեիդներ (ալֆա) 200թեսթ	Հավաքածուն պարունակում է 200 հատ քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	HDL-C Gen.3, 200Tests, cobas c, Integra	Roche Diagnostics	Գերմանիա
20.	LDL - Լիպոպրոտեիդներ (բետա) 200 թեսթ	Հավաքածուն պարունակում է 200 հատ քանակությամբ թեսթ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	LDL-C Gen.3, 200Tests, cobas c,Int	Roche Diagnostics	Գերմանիա

Ապրանքները պետք է ունենան

1. Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության համապատասխան լիազոր մարմնի կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագիր, որի պատճենը ներկայացվում է մատակարարման ժամանակ:

2.Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը: (ներկայացվում է մատակարարման ժամանակ):

3.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Մեկ միավորի գին/ՀՀ դրամ/	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/	Մատակարարման ըստ 2018թ. հետևյալ եռամսյակների	
						3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ Ոչ ուշ քան 10.12.2018թ.
1.	Գլյուկոզա 800 թեստ	հավաքածու	15	19000	285,000	7	8
2.	Ընդհանուր սպիտակուց 300թեստ	հավաքածու	30	7500	225,000	15	15
3.	Ալբումին 300 թեստ	հավաքածու	1	14000	14,000		1
4.	Բիլիռուբին ընդհանուր 250 թեստ	հավաքածու	40	17000	680,000	20	20
5.	Բիլիռուբին ուղղակի 350 թեստ	հավաքածու	30	13000	390,000	15	15
6.	Միզանյութ 500 թեստ	հավաքածու	10	15000	150,000	5	5
7.	Միզաթթու 400 թեստ	հավաքածու	1	29000	29,000	1	
8.	Կրեատինին 700 թեստ	հավաքածու	7	14000	98,000	4	3
9.	Տրանսամինազա ԱՍՏ 500 թեստ	հավաքածու	15	14000	210,000	7	8
10.	Տրանսամինազա ԱԼՏ 500 թեստ	հավաքածու	18	14000	252,000	8	10
11.	Գամմա-գլյուամիլ տրանսպեպտիդազա Տ 400 թեստ	հավաքածու	3	19000	57,000	1	2
12.	Ալֆա-Ամիլազա 300 թեստ	հավաքածու	5	42000	210,000	2	3
13.	Լիպազա 200 թեստ	հավաքածու	1	25000	25,000	1	
14.	Հիմնային ֆոսֆատազա 200 թեստ	հավաքածու	6	11000	66,000	3	3
15.	Լակտատ-դեհիդրոգենազա 300 թեստ	հավաքածու	1	19000	19,000		1
16.	Կրեատին ֆոսֆոկինազա CK-NAK 200 թեստ	հավաքածու	1	20000	20,000		1
17.	Խոլեստերոլ 400 թեստ	հավաքածու	13	19000	247,000	6	7
18.	Տրիգլիցերիդներ 250 թեստ	հավաքածու	13	15000	195,000	6	7
19.	HDL - Լիպոպրոտեիդներ (ալֆա) 200թեստ	հավաքածու	12	32000	384,000	6	6
20.	LDL - Լիպոպրոտեիդներ (բետա) 200 թեստ	հավաքածու	12	84000	1,008,000	6	6
Ընդամենը					**4,564,000**		

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-9/26-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝

Հ/հ	Ապրանքի անվանումը	CPV կոդ	Ընդհանուր գին /դրամ/	Ըստ 2018թ ամիսների՝ աճողական					
				հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ քան 10.12.18թ.-ը
1.	Գլյուկոզա 800 թեսթ	33691162/58/10/4	285,000	133,000	133,000	133,000	285,000	285,000	285,000
2.	Ընդհանուր սպիտակուց 300թեսթ	33691162/59/10/4	225,000	112,500	112,500	112,500	225,000	225,000	225,000
3.	Ալբումին 300 թեսթ	33691162/60/10/4	14,000	0	0	0	14,000	14,000	14,000
4.	Բիլիռուբին ընդհանուր 250 թեսթ	33691162/61/10/4	680,000	340,000	340,000	340,000	680,000	680,000	680,000
5.	Բիլիռուբին ուղղակի 350 թեսթ	33691162/62/10/4	390,000	195,000	195,000	195,000	390,000	390,000	390,000
6.	Միզանյութ 500 թեսթ	33691162/63/10/4	150,000	75,000	75,000	75,000	150,000	150,000	150,000
7.	Միզաթթու 400 թեսթ	33691162/64/10/4	29,000	29,000	29,000	29,000	29,000	29,000	29,000
8.	Կրեատինին 700 թեսթ	33691162/65/10/4	98,000	56,000	56,000	56,000	98,000	98,000	98,000
9.	Տրանսամինազա ԱՍՏ 500 թեսթ	33691162/66/10/4	210,000	98,000	98,000	98,000	210,000	210,000	210,000
10.	Տրանսամինազա ԱԼՏ 500 թեսթ	33691162/67/10/4	252,000	112,000	112,000	112,000	252,000	252,000	252,000
11.	Գամմա-գլյուամիլ տրանսպեպտիդազա Տ 400 թեսթ	33691162/68/10/4	57,000	19,000	19,000	19,000	57,000	57,000	57,000
12.	Ալֆա-Ամիլազա 300 թեսթ	33691162/69/10/4	210,000	84,000	84,000	84,000	210,000	210,000	210,000
13.	Լիպազա 200 թեսթ	33691162/70/10/4	25,000	25,000	25,000	25,000	25,000	25,000	25,000
14.	Հիմնային ֆոսֆատազա 200 թեսթ	33691162/71/10/4	66,000	33,000	33,000	33,000	66,000	66,000	66,000
15.	Լակտատ-դեհիդրոգենազա 300 թեսթ	33691162/72/10/4	19,000	0	0	0	19,000	19,000	19,000
16.	Կրեատին ֆոսֆոկինազա CK-NAK 200 թեսթ	33691162/73/10/4	20,000	0	0	0	20,000	20,000	20,000
17.	Խոլեսթերոլ 400 թեսթ	33691162/76/10/4	247,000	114,000	114,000	114,000	247,000	247,000	247,000
18.	Տրիգլիցերիդներ 250 թեսթ	33691162/77/10/4	195,000	90,000	90,000	90,000	195,000	195,000	195,000
19.	HDL - Լիպոպրոտեիդներ (ալֆա) 200թեսթ	33691162/78/10/4	384,000	192,000	192,000	192,000	384,000	384,000	384,000
20.	LDL - Լիպոպրոտեիդներ (բետա) 200 թեսթ	33691162/79/10/4	1,008,000	504,000	504,000	504,000	1,008,000	1,008,000	1,008,000
Ընդամենը			**4,564,000**	**2,211,500**	**2,211,500**	**2,211,500**	**4,564,000**	**4,564,000**	**4,564,000**

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-9/26-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-9/26-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն